

վերջը: Նա գուցէ միակն է մեր բանաստեղծներին շարքում, որ եւ ոչ մի էջ արձակ գրութեամբ չունի: Գրել է միայն եւ միայն ոտանաւորներ: Այդ ոտանաւորները ծնունդ են իր ժամանակի եւ պայմանների: Բանաստեղծը իր հոգին, իր սէրն ու վիշտը արտացոլելով սեփական ստեղծագործութեան մէջ, հարազատօրէն արձագանգ է տալիս հասարակական տրամադրութիւններին: Տրամադրութիւններ, որ, մանաւանդ սկզբնական շրջանում, տողորոշած էին յոռետեսութեամբ,

Յովհաննիսեան իր դարու զաւակն էր:

4.— Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ՝ ԶՈՒՏ ՔՆԱՐԵՐԳՈՒՄ

Յովհաննէս Յովհաննիսեան հայ գրականութեան պատմութեան մէջ իր տեղն ունի նախ եւ առաջ շնորհիւ այն հանգամանքի, որ նա ժամանակաւորապէս առաջին զուտ քնարերգակ բանաստեղծն է արեւելահայոց մէջ:

Իր նախորդները՝ Պատկանեան, Շահաղիզ, Նալբանդեան հրապարակ էին եկել, ապրել եւ ստեղծագործել՝ նշանաբան ունենալով «նախ քաղաքացի, ապա բանաստեղծ» տեսութիւնը: Անգամ Շահաղիզ, որ թէեւ բաղդատաբար աւելի էր գրել քնարական ոտանաւորներ, նա եւս ուղեգիր է ունեցել վերոյիշեալ նշանաբանը, որի հեղինակն էլ հէնց ինքն է: Յովհաննէս Յովհաննիսեան ընտրեց բոլորովին հակառակ մի նշանաբան: Նա նախ եւ առաջ բանաստեղծ է, ապա թէ՛ քաղաքացի: Դա մի նոր խօսք էր մեր իրականութեան մէջ եւ ինքնին բաւական, Յովհաննիսեանին պատուաւոր տեղ յատկացրնելու մեր գրականութեան պատմութեան մէջ:

Հին վէճ է՝ գրականութիւնը, արուեստը կեանքի՞ համար, թէ՞ իր համար: Իր խորքում՝ պարապ վէճ, մեր կարծիքով: Ո՛չ առհասարակ գրականութիւն, արուեստ կարող է լինել առանց կեանքի — մարդ-անհատն էլ նրա մի մասնիկն է արդէն, ոչ էլ կեանք, իրականութեան սոսկ անդրադարձումը արուեստի մէջ կը բաւի, որ նա այդպէս կոչուի:

Կարեւորը ոչ բովանդակութիւնն է այս կամ այն գրութեամբ, ոչ էլ նրա ձեւը, առանձին վերցրած, այլ՝ երկուքը մէկտեղ առած, եւ մանաւանդ՝ թէ ի՞նչ տաղանդի կնիք է կրում

նա իր վրայ: Առանց երկնային ձիրքի, առանց գեղարուեստական ներշնչման՝ ամենէն իրապաշտ գրութեամբ իսկ աւելի արժէք ունենալ կարող չէ, քան մի լուսանկարչական գործ: Առանց նոյն ներշնչման՝ ամենէն արուեստաւոր ոտանաւորն էլ հեռու է բանաստեղծութիւն լինելուց:

Գրական արժէքի տեսակէտից երկրորդական կարեւորութիւն ունին նաեւ գրութեամբ մէջ արտայայտուած հասարակական տրամադրութիւնները, ինչպէս նաեւ այն, թէ գրական ի՞նչ դպրոցի է հետեւում հեղինակը: Ամենէն անհատապաշտ արուեստասէր ընթերցողի կողմից անգամ՝ գնահատութեան արժանանալ կարող է ընկերային բովանդակութիւն եւ միտում ունեցող մի երկ, եթէ միայն գուրդ չէ գեղարուեստական արժէքից: Եւ ընդհակառակը: Այդպէս եւ իրապաշտ ուղղութեան հետեւող ամէն մի անհատ սիրով կը կարգայ եւ կը գնահատէ վիպապաշտ, խորհրդապաշտ եւ այլ կարգի գրութեանքներ, եթէ միայն դրանք տաղանդի արգասիքներն են: Եւ ընդհակառակը: Քաղաքականօրէն-հասարակականօրէն ամենէն յետադէմ ընթերցողն անգամ չէ կարող իրական հաճոյք չզգալ, օրինակ, մի շատ արմատական, յեղափոխական գրական երկից, եթէ դա արուեստագէտի ստեղծագործութիւն է, եւ ոչ թէ արհեստաւորի: Եւ ընդհակառակը:

Կարճ, գրական-գեղարուեստական երկին մօտենալ, նրան գնահատութեան ենթարկել պէտք է որպէս այդպիսին միայն, առանց կողմնակի, արուեստի հետ կապ չունեցող դիտումների: Դժբախտաբար, այդպէս չեն դատում մանաւանդ մեզնում: Եւ, նման չիլ հասկացողութեան դոհերն են մի քանի շնորհալի գրողներ: Օրինակ, մի այնպիսի տաղանդաւոր գրող, վիպագիր Նար-Դոսն է, տասնեակ տարիներ շարունակ անյայտութեան մէջ է մնացել, գնահատութեան չէ արժանացել այն պատճառով առաւելապէս, որ նա անհատապէս կապուած է եղել, երկար ժամանակ, պահպանողական «Նոր-Դար» թերթի հետ: Այդպէս էլ, Յովհաննէս Յովհաննիսեան չի գնահատուել ըստ արժանւոյն, որովհետեւ որպէս քաղաքացի պահպանողականների շարքում է գտնուել